ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

<<-->> ----------**2014թ.** № ---------- -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ. 95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Իսրաելյան փողոցի հ39 շենքի հ.24՝9.83քմ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.02.2014թ.N04022014-01-0169 վկայական) և Իսրաելյան փողոցի հ39 շենքի հ.25՝9.54քմ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.02.2014թ.N04022014-01-0181 վկայական) ընդհանուր մակերեսով բնակարանները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սուսաննա Պետրոսյանին, Նունե և Լիլիթ Գևորգյաններին, Գևորգ և Հռիփսիմե Մարկոսյաններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նունե Գևորգյանը դիմել է Երևանի քաղաքապետարան Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Իսրաելյան փողոցի հ.39 շենքի հ.24՝9.83քմ և 25՝ 9.54քմ ընդհանուր մակերեսով բնակարանները իր բազմանդամ ընտանիքին մասնավորեցնելու խնդրանքով:

Իսրաելյան փողոցի հ.39 շենքի հ.24՝(անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.02.2014թ. N04022014-01-0169 վկայական) և Իսրաելյան փողոցի հ.39 շենքի հ.25՝(անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.02.2014թ.N04022014-01-0181 վկայական) բնակարանները հանդիսանում են Երևան համայնքի սեփականությունը:

Նունե Գևորգյանի 10 անձից բաղկացած ընտանիքը բնակվում է Իսրաելյան 39 շենքի հ.19 բնակարանում, որի բնակելի մակերեսը կազմում է ընդամենը 28.9քմ: Բնակության համար նախատեսված պայմանները սուղ լինելու պատճառով նշված ընտանիքը դեռևս 1995 թվականից զբաղեցրել է տվյալ շենքի 2-րդ և 3-րդ, ինչպես նաև 3-րդ և 4-րդ հարկերի միջև ընկած հատվածում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակելի տարածքները, սակայն հատկացման վերաբերյալ փաստաթուղթ չլինելու պատճառով մինչ օրս չեն կարողացել մասնավորեցնել այդ բնակարանները:

Նունե Գևորգյանի ընտանիքի կողմից 25.08.2014թ. տրվել է հայտարարություն, որով ընտանիքի անդամները խնդրել են, որպեսզի քննարկվող բնակելի տարածքները մասնավորեցվի Իսրաելյան 39 շենքի 19 բնակարանի սեփականատերեր հանդիսացող՝ Սուսաննա Պետրոսյանի,Նունե Գևորգյանի, Լիլիթ Գևորգյանի, Գևորգ Մարկոսյանի, Հռիփսիմե Մարկոսյանի անվամբ:

Համաձայն Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի գրության՝ քննարկվող տարածքները փաստացի օգտագործվում են Նունե Գևորգյանի ընտանիքի կողմից, որի նկատմամբ «Կենտրոն-1» համատիրությունը 01.08.2014թ. հինգ տարի ժամկետով կնքել է պայմանագիր:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ. 95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ. 95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Իսրաելյան փողոցի հ.39 շենքի հ.24 և 25 հասցեում գտնվող բնակարանների անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ